ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/14

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝ Գ. Թովմասյանի (լիազորագիր տրված՝ 31.01.2019թ.)

Քննելով Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ի կողմից 30.01.2019թ. ներկայացված և 30.01.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/14 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 30.01.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը՝

«Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով բաց մրցույթ /այսուհետ նաև՝ Մրցույթ/, որին մասնակցելու նպատակով 27.12.2018թ. 6-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ն և ճանաչվել է առաջին տեղզբաղեցնող մասնակից:

Այնուհետև Մրցույթի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, որի համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն 915 000 ՀՀ դրամի չափով:

Այնուհետև գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության կողմից ներկայացված հայտը մերժվել է՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն ունենալու հիմքով:

Բողոքի իրավական հիմքերն և հիմանվորումները

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն Ընկերությունը 27.12.2018թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օրվա դրությամբ/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 915 000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընկերությունը հայտնել է, որ «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով:

Սակայն Երևանի քաղաքապետարանի կողմից մրցույթի շրջանակներում բացահայտվել է, որ Ընկերութունը ունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցմանբ մաւին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշերի վճարման գծով այնինչ՝ նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբևիցե չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից:

Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի համաձայն՝ «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի 27.12.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Եվ պետք է նշել, որ Ընկերության միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն և Ընկերությունը հայտը ներկայացրել է հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները ըստ, որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ 27.12.2018թ. ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ, ավելին միևնույն ժամանակաշրջանում Ընկերությունը ունեցել է մոտ 9 միլիոն ՀՀ դրամ միասնական հաշվում առկա գումար:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի

գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 18.01.2019թ. նիստի թիվ 5-րդ արձանագրությամբ Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը բողքին կից որպես ապացույց ներկայացրել է 27.12.2018թ. դրությամբ Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման վարչության կողմից 22.01.2019թ. տրված թիվ 59 տեղեկանքի պատճենները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.02.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Երևանի քաղաքապետարանը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է տրամադրել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթին վերաբերվող անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն վերջինիս կողմից սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.02.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ԱՄ-2019/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ), որին մասնակցելու նպատակով ***27.12.2018թ.*** հայտ է ներկայացրել «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ն:

2. Ընթացաարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի 2.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ն:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 17.01.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 915 000 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.01.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը, մերժել է «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի հայտը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի 30.01.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Այսպիսով, Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ***27.12.2018թ.*** հայտ է ներկայացրել «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ն:

Ընթացաարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի 2.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ն:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-

րդ կետի հիման վրա 17.01.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 915 000 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.01.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը, մերժել է «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի հայտը:

ԳԲՔԱ-ԱՄ-2019/14 բողոքի քննության շրջանակներում Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.02.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

Ընկերությունը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքով ներկայացրել է 27.12.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ընկերությունը 27.12.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Միաժամանակ Ընկերությունը ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ՀՎՍ վարչության 22.01.2019թ. թիվ 59 տեղեկանքը առ այն, որ 27.12.2018թ. դրությամբ Ընկերությունը ունի 994 000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարի մասով պարտավորություն:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Այսպիսով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 17.01.2019թ. տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է, որ «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 915 000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է օրենքով նախատեսված շեմը:

Սակայն, ուսումնասիրելով Ընկերության 27.12.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը 27.12.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու

օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Ուստի, առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ, Ընկերությունը ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նման փաստական հանգամանքներով կայացրել է ԳԲԽ-ԱՄ-2018/83 և ԳԲԽ-ԱՄ-2018/87 որոշումները, որոնց շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն գրությամբ հայտնել է, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ընկերությունները պարտավորությունները կատարելիս առաջնորդվել են բացառապես էլեկտրոնային համակարգի անձնական գրասենյակում անձնական հաշվի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն ընկերությունը ժամկետանց պարտավորություններ չի ունեցել, ինչպես նաև հաշվի առնելով դրոշմանիշային վճարների պարտավորությունները որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ համարելու վերաբերյալ հարկ վճարողի իրազեկված չլինելը, ուստի տվյալ պարագայում ժամկետանց հարկային պարտավորությունների հանգամանքը, գնումների գործընթացին մասնակցության առումով, չդիտարկել որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն:

Այսպիսով, վերը նշված հանգամանքը հաշվի առնելով, գտնում եմ, որ «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ի կողմից 30.01.2019թ. ներկայացված բողոքը բավարարել, մասնավորապես՝ պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով գնման

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 18.01.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ